# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» դեկտեմբերի 2019 թվականի N 43

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-095-0095-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ,ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԻ, ԱՆԱՍՆԱԳՈՄԻ,ՄԱՌԱՆԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Արսեն Իսահակյան անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-095-0095-0008 ծածկագրի տակ գտնվող 0.10138 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ Պատվական Ցոլակի Տոնիկյանի /ծնված 10/06/1966թ./ , Մարինե Կիրովի Ասատրյանի /ծնված 28/09/1973թ./, Ցոլակ Պատվականի Տոնիկյանի /ծնված 11/06/1992թ./սեփականության իրավունքը:

2.Հողամասը չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3.Վերականգնել և ճանաչել 0.10138 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1991 թվականին կառուցված 61.04 քմ բնակելի տան, 61.8 քմ նկուղի, 4.62 քմ աստիճանների, 36.88 քմ բաց պատշգամբի, 54.15 քմ անասնագոմի, 7.34 քմ մառանի նկատմամբ Պատվական Ցոլակի Տոնիկյանի /ծնված 10/06/1966թ./ , Մարինե Կիրովի Ասատրյանի /ծնված 28/09/1973թ./, Ցոլակ Պատվականի Տոնիկյանի /ծնված 11/06/1992թ./ սեփականության իրավունքը:

4.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Ջրաշեն համայնք, 9 փողոց, 1 Փկղ. 17 տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՈՒՌՈՒՍՅԱՆ